«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանության դասավանդման ընթացքում»

Հեղինակ՝ Ռուզաննա Ղուկասյան

Առարկա՝ Կենսաբանություն

Սևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն – էջ 2-3

2. «Արժեհամակարգ» հասկացությունը – էջ 3-5
3. Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները – էջ 4-6
4. Սովորողի արժեհամակարգի ձևավորումը – էջ 7-9
5. Արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանության դասավանդման ընթացքում – էջ 9-17
6. Եզրակացություն – էջ 18-19
7. Հավելված
8. Գրականություն – էջ 20

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձեւավորումը

կենսաբանության դասավանդման ընթացքում

Ներածություն

Երեխաների կրթության մասին խոսելիս մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում : Փորձենք ձևակերպել , թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ,այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել:Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ , քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը:Առանց արժեքների կյանքը դատարկ է:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից , ձևավորվում է դրանց շնորհիվ:Այդ նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են , այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը:Մարդիկ դժբախտանում են ,տնտեսությունն անկում է ապրում,հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը

և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արված, բայց աշակերտի համար ոչինչ

չնշանակող ճշմարտությունները:Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը:

1. «Արժեհամակարգ» հասկացությունը

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնում է բավական լայն շառավիղով:Առավել ընդունված է այն ընկալումը , որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական , հոգևոր, իմացական , մշակութային և էթիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները :

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում, բնության հանդեպ սեր և հոգատար վերաբերմունք: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտը ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքը աշխարհի կատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի

(ուսումնական հաստատություններ, մանկապատանեկան կառույցներ) միջոցով: Անհատական և սեռատարիքային տարբերություններին զուգահեռ կան նաև արժեքային կողմնորոշումների ընդհանուր բնութագրեր, որոնք բնորոշ են օնտոգենեզի որոշակի փուլերին: Արժեքային կողմնորոշումների փոփոխությունների գործընթացը ,դրանց որակական վերակառուցումն առավել կերպով տեղի է ունենում երեխայի՝ օնտոգենեզի մի փուլից մյուսին անցնելու շրջանում:Հենց այդ ժամանակ ի հայտ եկող նորագոյացությունների հիման վրա են առաջանում երեխայի արժեքային կողմնորոշումների փոփոխության միտումները, որոնք հակասության մեջ են մտնում գոյություն ունեցող շարժառիթների և պահանջմունքների համակարգի հետ՝ կանխորոշելով դրանց որակական վերակառուցումը:

Արժեքներն ընդգրկում են մի քանի խմբեր.

Առաջին խմբում են ընդգրկվում համամարդկային , բարոյական նորմերը, որոնք, ըստ երևույթին, կարևորվում են ցանկացած մշակույթում: Դրանք են՝ մարդակային արժանապատվությունը,սերը, ընկերությունը, իրավահավասարությունը և այլն:

Երկրորդ խմբին են պատկանում կոնկրետ վարքային իմաստ ներառող արժեքները, որոնք գերազանցապես արտահայտվում են վարքի հատկանիշի տեսքով,նրանք ավելի ճկուն են ու փոփոխական՝կախված կոնկրետ սոցիալական իրադրության հետ:Դրանցից են՝ «հավատարիմ», «քաղաքավարի», «գիտակ» և այլ հատկանիշներով արտահայտվող արժեքները:

Արժեքների խմբի ձևավորումը մեծապես կախված է նոր փորձի յուրացումից և ենթակա է փոփոխման:Արժեքների բացահայտման, արժեհամակարգի ձևավորման գործընթացը նպաստում է անձի դիրքորոշումների հստակեցմանը:Բացահայտված և գիտակցված արժեքները դառնում են նախընտրելի, ձեռք են բերում կայուն և հետևողական բնույթ:

Արժեհամակարգի ձևավորման երկարատև գործընթացը ներառում է առկա արժեքների ուսումնասիրությունն ու գնահատումը , նոր իրավիճակում ինքնադրսևորման նորովի ընկալումն ու արժևորումը: Անհրաժեշտ պայման է

հասարակության մեջ անձի նոր ձևավորվող դիրքորոշումների այնպիսի ներկայացումն ու շրջանառումը ,որոնք դառնում են հասարակայնորեն կարևորվող և ընդունելի:

2. Արժեհամակարգի ձեւավորման վրա ազդող գործոնները

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից `այդ միջավայրին բնորոշ արժեքների կանոնների,չափանիշների հայացքների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս կարևոր գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնակիատկությունների:

Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանկն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն:Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ որոշակի աստիճանակարգությունը:Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի , ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:/3.64/

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինկավոր , երևելի մարդկանց հետ շփումները(ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ):

Այդ հեղինակավոր անձինք կարող են լինել դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն : Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև՝ բացասական : Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

3. Սովորողի արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում

Աշակերտների արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է,դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնականան գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքումօգտագործելու ըստ նպատակի :

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն օտար լեզուները, գրականությունը: Գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով : Այս առարկաները հնարավորություն են ընձեռում սերմանելու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունը: Ի դեպ ՝ յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ

ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից է :Ընդ որում դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանանվորված է նաև նրանով , որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական , գեղագիտական ու ֆիզիկական խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում :

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական , դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների ,արժեքային որակների , կամքի , բնավորության , զգացմունքների , հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

«Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք , որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման , նպատակին հասնելու , գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու , տիրելու ու տիրապետելու երջանկությունը»:/5.59/

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարաչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:Ուսուցիչը ուսուցման

կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական , խմբային, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառում) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարաչական խնդիրների լուծումը; Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց , միասին հաղթահարել դժվարությունները , միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ:Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ , ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը՝ դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորում են համառության , ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

4.Արժեքային համակարգի ձևավորումը կենսաբանության դասավանդման ընթացքում:

Կ. Պիտերսը առանձնացրել է կրթության չափանիշները և դրանցից առաջինը դասել է արժեքները, քանի որ կրթությունը ոչ թե ցանկացած, այլ կարևոր, որոշակի արժեք ներկայացնող գիտելիքների փոխանցումն է:

Կենսաբանությունը, լինելով գիտություն կյանքի մասին, չէր կարող ազդեցություն չունենալ աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա: Իհարկե անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման առաջին աստիճանը համարվում է ընտանիքը, որտեղ դրվում է բնագիտության, էկոլոգիական վարքի, ճիշտ բնօգտագործման հիմքերը:Դեռևս վաղ մանկական տարիքից պետք է երեխային սովորեցնել սննդին , որ մեզ տալիս է բնությունը, և սնման դերն ու արժեքը, բացատրել սննդի տարրերը, նրանց փոխկապակցվածությունը, ընդհանրապես սնման շղթան բնության մեջ, բնության գեղագիտական , առողջարարական, արժեքային նշանակությունը:

Այն խաղալիքները, որոնցով մենք շրջապատում ենք երեխաներին, և որոնց հետ նրանք շփվում են վաղ մանկական շրջանից, նրանց համար դառնում են ոգևորության և ճանաչողության աղբյուր: Երեխաները շունչ ու ոգի են հաղորդում այդ առարկաներին, կապվում նրանց հետ, զրուցում, խռովում, պատժում, սիրում ու գուրգուրում դրանք և ոչ ոքի չեն ուզում զիջել: Հենց այստեղ է երեխայի համար ծնվում «արժեք» հասկացությունը:

Կենդանիների, նրանց վարքի, կենսաձևի, բնության մասին երեխան նախնական գիտելիքներ ձեռք է բերում տանը, ապա՝ ստանում դպրոցում:Ուսուցիչները պետք է ձգտեն , որ այդ արժեքները դառնան սովորողների նվաճումը՝նպաստելով նրանց ստեղծագործական ինքնիրացմանը: Կենսաբանություն առարկան հիմնական դպրոցում ձևավորում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝

- Զարգացնելու և պահպանելու հետաքրքրասիրությունը և հարգանքը բնության և կենդանի աշխարհի հանդեպ
- Ձևավորելու ու ամրապնդելու առողջ ապրելակերպին միտված գիտակցված վարքագիծ և սովորույթներ
- Զարգացնելու պատասխանատու քաղաքացու վերաբերմունք և մտադրվածություն՝ նպաստելու անձնական և հանրային առողջությանը:

Միջնակարգ դպրոցում սերմանվում են հետևյալ արժեքները.

- Ցուցաբերելու հետաքրքրություն կենսաբանության ուսումնասիրության նկատմամբ, գնահատելու բնության հրաշքներն ու կատարելությանը և հարգանքով վերաբերվելու բնությանը
- Իրազեկ լինելու հասարակության կյանքում կենսաբանական գիտելիքների կիրառություններին և դրանց սոցիալական , էթիկական , տնտեսական և բնապահպանական հետևանքներին
- Գիտակցելու կենսաբանական գիտելիքների դինամիկ բնույթը և արժևորելու գիտության և տեխնոլոգիայի դերը կենդանի բնությունը հասկանալու համար

- Գիտակցելու սեփական պատասխանատվությունը հետագա սերունդների համար շրջակա միջավայրը պահպանելու և դրան խնամքով վերաբերվելու գործում
- Ձևավորելու առողջ ապրելակերպ

Կենսաբանության դասավանդման ընթացքում որոշակի արժեքների ձեռքբերմամբ զարգանում է էկոլոգիական դաստիարակությունը :Հատկապես հիմնական դպրոցում է ձևավորվում էկոլոգիական հասասկացությունների համակարգը միջավայրի, նրա գործոնների , օրգանիզմների, էկոհամակարգերի , կենսաերկրացենոզի , պոպուլացիաների, տեսակների , սնման շղթաների , դրանց փոխադարձ կապերի և զարգացման օրինաչափությունների վերբերյալ: Ձևավորվում և զարգանում են սովորողների էկոլոգիական մտածողությունը , բնապահպանական պահանջմունքները, բնաճանաչողական ընդունակությունները , վարքագծի բարոյահիրավական նորմերը , հուզակամային որակները : Սրանց թվին են պատկանում պարտքի , պատասխանատվության կատեգորիաները , որոնք արտահայտվում են անձի սոցիալական, բարոյահիրավական վերաբերմունքը, պատասխանատվությունը ու պարտականությունները հասարակության և շրջակա միջավայրի նկատմամբ :Սովորողների մոտ ձևավորվում է շրջակա միջավայրի մեջ իր վարքագծի ճիշտ դրսևորման , բնության սոցիալ- տնտեսական , գեղագիտական և հոգևոր արժեքների գիտակցման, բնությունը `որպես ազգայի հարստություն ընկալելու ու նրա օգտագործման ուղղությամբ իր իրավունքների ու պարտականությունների իմացության հարցերը:

Դեռահաս դպրոցականների մոտ ձևավորվում են .

- Բնության բազմակողմանի արժեքների գիտակցումը՝ որպես հասարկության հոգևոր և նյութականուժի աղբյուր
- շրջակա միջավայրի վիճակի գնհատման ունակության ձևավորում և նրա բարելավման ուղղությամբ ճիշտ որոշման ընդունում, իր գործողությունների հնարավոր հետևանքների կանխատեսում՝ ողջ

գործունեության ընթացքում բացառելով բնության վրա բացասական ազդեցությունը

- Բնության մեջ վարքի նորմերի գիտակցված պահպանում՝ թույլ չտալով բնական միջավայրի աղտոտում կամ ավերում
- Բնության բարեկարգող և վերափոխող գործունեության ակտիվացում և անհանդուրժողականություն այն մարդկանց գործողության նկատմամբ , որոնք վնաս են հասցնում բնությանը:
- Բնության պահպանության քարոզչություն:

Կարևոր է նաև հայրենասիրական արժեքի ապահովումը :

Առարկայի ուսուցման ժամանակ պետք է հետևողականորեն ձևավորել այն համոզմունքը , որ պահպանել բնությունը նշանակում է պահպանել հայրենիքը :Չէ՞ որ յուրաքանչյուր մարդու համար հայրենիքի գաղափարը կապված է հայրենի բնության հետ : Պահպանել բնությունը, նրա հարստությունները , գեղեցկությունները , նշանակում է պաշտպանել սեփական տունը, հայրենիքը:

7-րդ դասարանում կենսաբանություն առարկան ուսումնասիրում է բույսերը և կենդանիները:Ուսուցչի պարտականությունն է սերմանել սեր դեպի բնությունը, առաջացնել հետաքրքրություն առարկայի հանդեպ:Շատ կարևոր է բացահայտել բնության կարևորությունը, նրա դերը մեր կյանքում:Օրինակ՝»Ինչ է բությունը» դասի ժամանակ աշակերտների գիտակցությանը պետք է հասցնել , որ բնությունը մեզ շրջապատող աշխարհն է՝ իր անկենդան և կենդանի բնությամբ,որոնք պայմանավորված են միմյանցով և կապված են միմյանց հետ: Այս բոլորը ձևավորում է բնության ամբողջականության մասին գաղափար, մարդը բնության մի մասնիկն է, ու նրա բարեկեցիկ կյանքը պայմանավորված է հողի , օդի , ջրի գոյութամբ : Աշակերտի կարգախոսը պետք է լինի « Մարդը կենսաբանական էակ է և իր արմատներով կապված է բնությանը»: Աշակերտներին մարդու առողջության, հանգստի և աշխատանքի նորմալ պայմաններին ծանոթացնելիս պետք է նշել, որ այս բոլորի համար անհրաժեշտ են նպաստավոր բնական պայմաններ, որոնք միայն ոչ միայն պետք է պահպանել, այլև՝ բարելավել:Բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու բարոյական նորմերի

դաստիարակության հարցը աշակերտների համար բացահայտվում է աստիճանաբար, այնքանով , որքանով այն կապված է կոնկրետ դասի թեմայի խնդիրների հետ:Ըստ այդմ էլ աշակերտները դիտողական օրինակների հիման վրա պետք է հասկանան , թե բնության մեջ ինչն է կարելի և ինչը ՝ ոչ: Բնության նկատմամբ աշակերտների իմացողական վերաբերմունքի ձևավորման համար անհրաժեշտ է բացահայտել բնության արժեքային բնույթը, նրա դերը մարդու կյանքում , այսինքն՝ բնությունը լայն իմաստով դարձնել նրանց արժեքային համակարգի բաղադրիչը: Անհրժեշտ է դասագործընթացում օգտագործել բոլոր միջառարկայական կապերը՝ աշակերտներին ցույց տալու համար գիտելիքների միասնականությունը,բնության գեղեցկությունը, նրա առողջարար ու գործնական նշանակությունը, նրանց մեջ արթնացնել բնությունը պահպանելու ցանկություն՝ որպես կենսապահովման , գեղեցկության , երջանկության , ներշնչման աղբյուր , որպես մարդու գոյության հիմնական և միակ միջոց :

Որպեսզի ուսուցիչը աշակերտներին ծանոթացնի բնության արժեքներին , բացի դասի տարբեր տեսակներից ու մեթոդներից օգտվելուց, կենսաբանության դասերը պետք է անցկացվեն բնության գրկում՝ էքսկուրսիաների ձևով: էքսկուրսիաների ընթացքում աշակերտները կարող են նաև մասնակցել որոշ բնապահապանական միջոցառումների :

էքսկուրսիաների ժամանակ աշակերտները պետք է համոզվեն, որ բնությունը ամբողջական է և բացահայտեն կենդանական ու բուսական օգանիզմների մեջ եղած սերտ փոխադարձ կապերը: էքկուրսիան կարելի է անցկացնել անտառում: Անտառում տերևների խշշոցը , կենդանիների ձայները , թռչուներչի ծլվլոցը անդորրություն են բերում և հանգստություն պարգևում: Անտառային բուսերն արձակում են օրգանական միացություններ, որոնք օդին տալիս են յուրահատուկ բուրմունք , այդ միացություններից շատերը կարող են յուրացվել օրգանիզմի կողմից շնչառության գործընթացում և օրգանիզմին կենսանյութեր տալ:Այս ամենից ելնելով՝ պետք է բացատրել , որ անտառը՝ որպես բուսական համակեցություն, ոչ միայն պետք է , այլև անհրաժեշտ է պահպանել և վերականգնել նրա հարստությունը:Պետք է ներկայացնել արգելոցների և և արգելավայրերի կարևորության մասին : Այնուհետև դասի ժամանակ կքննարկվի

էքսկուրսիայի ընթացքում հավաքված նյութերի դիտարկում , եզրակացություն կարվի մարդու գործունեության բազմաթիվ անցանկալի հետևանքների մասին և դրա հիման վրա կկատարվի անցում «բնապահպանական գործունություն» հասկացությանը :

Բնության պահպանության անհրաժեշտությունը քննարկելու համար կարելի է օգտագործել մեթոդական հետևյալ հնարը ՝ «Ինչ կլինի ,եթե...»: Օրինակ ՝»Ինչ կլինի, եթե ոչնչանան բուսական համակեցությունները» հարցը առաջադրել : Այս երևույթի բազմաքանակ հետևանքների շարքում պետք է նշել նաև տարբեր տեսակի արժեքավոր նյութերի հարուստ աղբյուրների կորուստը: Օրինակ՝ անտառում շատ են տարբեր դեղաբույսերը , և դրանց բոլորին տարբերակել հնարավոր չէ : Հաճախ երեխաների մեջ հարց է ծագում. «ինչո՞ւ պահպանել դեղաբույսերը և ազգային բժշկության մեջ կիրառել դրանք ,եթե ժամանակակից դեղանյութերը ստացվում են քիմիական ճանապարհով»: Ուսուցիչը պետք է բացատրի նման պատկերացումների սխալ լինելը:Դեղամիջոցների ցուցակում նշվում է , որ դրանց 45 տոկոսը ստանում են ծաղկավոր բույսերից, 2 տոկոսը սնկերից և բակտերիաներից և միայն 27 տոկոսը ստանում են քիմիական ճանապարհով :

7-րդ դասարանի կենսաբանության դասընթացում ընդգրկված է նաև «Կենդանիներ» բաժինը: Այս բաժնի յուրացման ճնապարհով սովորողների գիտելիքները հարստանում են կոնկրետ փաստերով , որոնք բնութագրում են կենդանիների դերը և տեղը էկոկոգիայան փոխհարաբերությունների տարբեր աստիճաններին:Սննդային շղթաների բարդ փոխհարաբերությունները, կենդանիների հարմարվելը կոնկրետ բնական միջավայրին և սեզոնային ռիթմերին, մարդու ազդեցությունը բույսերի և կենդանիների վրա հետաքրքրություն առաջացնող գործոներ են, որոնք աշակերտներին մղում են սովորելու և ուսումնասիրելու բնական փոխհարաբերույունների ՝ գործնական կյանքում օգտագործելու համար:

Կենդանիների դերը բնության մեջ և կյանքում ներկայացնելիս պետք է առանձնացնել նրանց օգտակար և վնասակար հատկանիշները , կարևորությունը :

7-րդ դասարանի դասերը կարելի է անցկացնել գործնական աշխատանքների ,դաս- միջոցառումների ձևով , որոնցում կներկայացվեն կենդանիների կարևորությունն ու նշանակությունը:

Այդպիսի դաս – միջոցառման օրինակ է «Հինգ հրաշքներ , որոնք չէին լինի առանց միջատների»:Դասի նպատակն է ամփոփել և ամրապնդել գիտելիքները միջատների բազմազանության և նշանակության մասին:Աշակերտները ներկայացնում են հետաքրքիր և խոսուն փաստեր միջատների մասին :Այնուհետև սահիկների , պաստառների միջոցով խոսում են հինգ հրաշքների մասին, որոնք չէին լինի առանց միջատների : Այդ հրաշքներն էին՝ փոշոտումը, , մեղրը, մետաքսը, , նյութերի շրջապտույտը և այն գեղեցկությունը(օրինակ `թիթեռների բազմազանությունը) , որով կարելի է անվերջ զմայլվել:

Աշակերտները արժևորում են միջատների անփոխարինելի դերը բնության մեջ և մարդու կյանքում , կարևորում են այն փաստը, որ եթե միջատները անհետանան երկրի երեսից, , հենց նույն ժամանակ կսկսեն անհետանալ երկկենցաղները, սողունները, թռչունները, կաթնասունները, այս ամենից հետո կանհետանա ծաղկավոր բույսերի մեծ մասը,ապա կմեռնեն անտառները , երկրի մակերեսը բառացիորեն կսկսի քայքայվել :

7- րդ դասարանի դասընթացի վերջում աշակերտների մոտ պետք է զարգանա «բնությունը աշխատանքի առարկա է և կյանքի միջոց» գաղափարը , ընկալումը , «մարդ- աշխատանք – բնություն» համակարգում հասկացությունների գնահատման ունակությունը, բարոյական դատողությունները , որոշումներ ընդունելու և շրջակա միջավայրի պահպանման աշխատանքներին մասնակցելու կարողությունները , էկոլոգիական գաղափարների քարոզչությունը:

Վերը նշված արժեքների գնահատումը շարունակվում է նաև ավագ դպրոցում : Ավագ դպրոցի սովորողների էկոլոգիական գործունեության

բովանդակության մեջ պետք է ներառել լանդշաֆտի գեղագիտական արժեքի գնահատումը , էկոհամակարգերի վիճակի որոշման , հողը քայքայումից պաշտպանելու աշխատանքները : Չափազանց կարևոր է սովորողների ներգրավումը բնապահպանական քարոզչության մեջ : Այսպիսի ներգրավումների փուլայնությունն ակնկալում է ավագ դպրոցականների կողմից տարբեր տարքի սովորողների հետ անցկացվող զրույցներն ու շրջակա միջավայրի , բնության երևույթների , կենդանիների վարքի , բնության հուշարձանների մասին պատմվածքներ պատմելը , էկոլոգիական թեմաներով դերային գործնական խաղերի, վիկտորինաների կազմակերպումը և այլն:Իսկ ավագ դպրոցականներին պետք է ընդգրկել շրջակա միջավայրի խնդիրների վերաբերյալ ցուցավահանակների ստեղծելու, ցուցահանդեսների ձևավորումների ,կինոնկարների ցուցադրման ,հետազոտվող տարածքում բնության և հասարակության փոխազդեցության տարեգրության կազմման աշխատանքների մեջ: Ինչպես նաև աշակերտներին պետք է ընդգրկել տարբեր արտաուսումնական , արտադպրոցական խմբակների , ցուցահանդեների , էկոլոգիական – հայրենագիտական արշավների մեջ:

«Մարդ անատոմիա» դասընթացը ուսումնասիրելիս ևս աշկերտների մոտ ձևավորվում են արժեքներ: Աշակերտները կարևորում են օրգան համակարգերի ամբողջականությունը, յուրաքանչյուր օրգանի դերը մարդու առողջության գործում , առողջ ապրելակերպ վարելու կանոնները, վնասակար գործոններից զերծ մնալը:

Աշակերտը պետք է գիտակցի , որ մարդու առողջությունը երջանկության և ուրախության կարևոր գործոն է:

Եզրակացություն.

Այսպիսով՝ արժեքների համակարգ ասելով՝ հասկանում ենք կյանքի նյութական և հոգևոր երևույթների որոշակի ամբողջությունը , որն առանձին անձերի և սցիալական խմբերի գործունեության մեջ հանդես է գալիս կողմնորոշումների և դիրքորոշումների դերում:Իհարկե այդ արժեքները և արժեքային կողմնորոշումները առաջին հերթին ձևավորվում են գիտելիքների ձեռք բերման , յուրացման և կիրառման գործընթացում :

Կենսաբանության դասավադման ընթացքում արժեքների ձևավորման համար պահանջվում է կրթության համակարգվածություն և անընդհատություն, միջառարկայական կապերի օպտիմալացում՝ հիմնական շեշտը դնելով սովորողների կողմից բնական միջավայրի պահպանման և վերափոխման նկատմամբ ունեցած իրավունքների և պարտականությունների գիտակցման վրա, միաժամանակ յուրաքանչյուր ուսուցչի պարտքն է երեխայի մեջ հոգատարություն սերմանել կենդանի բնության նկատմամբ : Ուսուցիչներին պետք է անհանգստացնեն առանձին երեխաների անտարբերությունը կենդանի բնության և շրջապատող աշխարհի գեղեցկության նկատմամբ թե այն արարքներից, որոնք վկայում են մանկական դաժանության մասին :Նրանք միշտ երեխաների մեջ պետք է արթնացնեն,պայծառ, վեհ զգացումներ, նրանց հոգում բարյացակամ, հոգատար վերաբերմունք ձևավորեն կենդանի բնության և ամենայն գեղեցիկի նկատմամբ :

Եվ վերջապես՝ կենսաբանության դասավանդման ընթացքում աշակերտը ճանաչում է իր անձը , մարմինը, ծանոթանում շրջակա միջավայրի,բնության զարմանահրաշ տարրերի հետ և, գիտակցելով այդ արժեքների կարևորությունը՝ ձեռք է բերում հոգու և մարմնի ներդաշնակություն:

Հավելված 1



ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԱՐԳԵԼԱՎԱՆՑ



ՍՈՍՈՒ ՊՈՒՐԱԿ

ՍԵՎ ԼԻԾ



20

Հավելված 2



Նկ. 9.5. Ծխելն արգելվում է:



Նկ. 9.6. Եղունգները կրծելը վնասակար է:



Նկ. 9.7. Համակարգիչների հետ աշխատանքը և խաղամոլությունը:

Գրականություն

1. Ասատրյան Լ. Թ. Էկոլոգիական դաստիարակություն\\Երևան 2000

2. Дежникова Н. С. Экологическая культура грани восприятия

Биология -1995ст. 10-22

3. Սուխումլինսկի Վ.Ա .Սիրտս նվիրում եմ երեխաներին

Երևան 1997

4.Зверев Н. Д Охрана природы и образования М.1986

5.Педагогика под . ред. Ю. Л. Бабанского С. Иойнера и др. М .1978 452с.

6.Я. Корчак Избранные педагогические произведения М.458 с. 1979

7.https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf

8.http://www.imdproc.am/p/kensabanvotyvon/7-dasaran

9.http://esource.armedu.am/app/?subject=8&grade=11

10.https://hy.khanacademy.org/science/zth-grade-biology